

Եզդիներ

Եզդիներ (ինքնանվանումը՝ *Էզդի*), Տաուսե Մալակի ժողովուրդ, կրոնը Շարֆադին, որի հիմքում ընկած է միաստվածության գաղափարը, Աստված մեկ է բոլորի համար և Աստծո թագավորությունը հավերժ է, իրանալեզու ժողովուրդ, լեզուն Էզդիկի: Որպես հնագույն ազգ, առաջացել է Միջագետքում՝ Իրաքի տարածքում, նրանց պատմական բնօրրանը համարվում է Իրաքի հյուսիսում գտնվող Շանգալը (ավելի ճանաչելի Սինջար): Եզդիները չունեն պետականություն, սփռված են աշխարհով մեկ: Ապրում են **Թուրքիայում**, **Իրաքում** (գլխավորապես՝ Մոսուլի և Սինջարի շրջաններում), **Սիրիայում**, **Հայաստանում**, **Վրաստանում**, **Ռուսաստանում**, **Գերմանիայում**, **Ֆրանսիայում**, **Կանադայում**, **Ամերիկայում** և մի շարք այլ երկրներում: Ոչ ստույգ տվյալներով Եզդիների թիվը աշխարհում հասնում է մինչև 3 միլիոնի:

Եզդիները իրենց կրոնի մասին տեղեկանում և գիտելիքներ են ձեռք բերում իրենց աղոթքներից. որոնք Էզդիկի կոչվում են «կավլ» կամ ամբողջական՝ «ըլմ»: Կավլերի (աղոթքների) լեզուն կոչվում է ադաբիերեն, որը բավականին բարդ է և գործածվում է միայն աղոթքների ժամանակ:

Եզդիների **Շարֆադին** կրոնում գործում է սուրբ երրորդություն գաղափարախոսությունը՝ ի պատիվ Եզդիական պանթեոնի 3 գլխավոր կերպարների՝ **Տաուսե Մալակ**, **Ճիխադի** և **Սլթան Էզդի** (եզդ. Էզդիտե Սոր):

Թյուր է այն կարծիքը, թե իբր Սլթան Էզդին Մուավիայի որդին է: Մուավիան եղել է արաբ, որն ապրել է 8-9 դարերում: Իսկ Սլթան Էզդին համարվում է լույս՝ Աստծո կողմից ստեղծված, որի համար ստույգ ժամանակաշրջան չի նշվում:

Եզդիներն իրենց ծագումից ի վեր կոչվել են 3 տարբեր անուններով՝ **Մթհայրա**, **Ադաբի**, ապա նոր **Էզդի**: